

ԵՐԻՓԵԱՆ, Գ.

ՈւՇ ԼԻՆԻ, ՆՈՒՇ ԼԻՆԻ

782

Ե-ՁԵ

2013

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ԶԱՐԳՍԻՆԻԱՆ ԳՐԱՏԱՆ

Գ. ԵՐԻՑԵԱՆ

782  
Ե-86

50431

# ՈՒՇ ԼԻՆԻ, ՆՈՒՇ ԼԻՆԻ

ՈՒՐԱԽ ՕՊԵՐԷՏ 3 ԱՐԱՐ



BIRBERIAN BOOKSTORE  
837 WASHINGTON ST.  
BOSTON, MASS.

Կ. ՊՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐ. Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՈՐՈՒԹ

1923

VI  
Ե-864

384

# ՈՒՇ ԼԻՆԻ, ՆՈՒՇ ԼԻՆԻ

(ՈՒՐԱՆ ՕՊԵՐԱՏ 3 ԱՐԱՐ)

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- ՆԱՀԱՊԵՏ — Գիւղացի
  - ՄԱՐԹԱ — Նրա կինը
  - ՆԱԶԻԿ — Նրանց աղջիկը
  - ՇՈՂԻ — Մարթայի բոլոր
  - ՍԱԳՕ — Նազիկի սիրահարը
  - ՕՀԱՆ — Գիւղական թէօնիայ
  - ԱՐՇԱԿ — Նրա ապուշ որդին
  - ԾԱՌԱՅ — Նահապետի ծառան
- Եւ ուրիշ գիւղացիներ ու աղջիկներ

50431

## Ա. ԱՐԱՐ

Բեմը ներկայացնում է գիւղական սենեակ՝ երկու դուռ-  
ներով՝ որոնցից մեկը փակում է դեպի բակը, միւսը դեպի  
սենեակը:

### ՏԵՍԻՍ 1

#### ՆԱԶԻԿ, ՇՈՂԻ ԵՒ ՄԱՐԹԱ

ՆԱԶԻԿ. — (Ներգում է) Ո՛ր ես, ձայն տո՛ւր, հէ՛յ, անջիգեար,  
Արի՛ տեսնեմ երագով,  
Մէ՛կ էլ տեսնեմ չինար բոլոյ,  
Զը՛նի մեռնիմ մուրադով:

Վարդ ցանեցի, փուշ քաղեցի } Կրկնում է  
Եար փնտոեցի, եարա գտայ... }

Թէ սարեր կան ճանալիդ վրայ,  
Թեւ առ, Թո՛ր, անց կացիր.  
Թէ զարկեր կան սրտիդ վրայ,  
Դո՛ւրս վռնդիր, շուտ հասիր...

Վարդ ցանեցի, փուշ քաղեցի, } Կրկնում է  
Եար փնտոեցի, եարա գտայ... }

ՇՈՂԻ. — Նազիկ ջան, դու դարդ մի՛ անիր, շառը գնա-  
ցել է, քիչն է մնացել: Էնա էսօր էգո՛ւնք քո Սաղճոն զինուո-  
րութիւնից կ'ազատուի և կըգայ:

ՄԱՐԹԱ.—Ի՞նչ Սաղօ, ի՞նչ բան... Մենք մեր Նազիկին հա-  
մար մի էնպիսի լաւ փեսացու ենք գտել որ, ջահիլ, հարուստ...

ՇՈՂԻ.—(Զարմանքով) Փեսացո՞ւ... էդպէս բան կայ ու  
ինձ չէ՞ք ասում: առանց իմ գիտութեան մարդո՞ւ էք տալիս  
Նազիկին:

ՄԱՐԹԱ.—Վա՛յ, Շողի ջան... բերնիցս թռաւ էդ խօս-  
քը... Նահապետը հազար անգամ ինձ խրատեց, որ քեզ բան  
չասեմ, բայց էլի չեղաւ, բերնիցս թոցրի:

ՇՈՂԻ.—Ի՞նչ... ի՞նչ... խրատեց, որ ինձնից թագցնես:

ՄԱՐԹԱ.—(Շփոթուելով) Չէ՛... ասում է... «Մինչև  
գործի գլուխ գալը, ո՛չ ոքին բան չասես. մանաւանդ քո քոյր  
Շողիին...»

ՇՈՂԻ.—Ի՞նչ... Ես ձեզնից պակաս եմ սիրում Նազի-  
կին և պակաս եմ ցանկանում նրան բախտաւորութիւն:

ՄԱՐԹԱ.—Ո՞վ է ասում, որ այդպէս չէ: Գիտենք որ  
սիրում ես մեր աղջկան, բայց...

ՇՈՂԻ.—Չէ՛, էստեղ մի ուրիշ բան կայ, առանց պատ-  
ճառի էդ գործը ինձնից թագցնել չէք կարող... Չի՞ ըլի, ի-  
մանանք՝ ո՞վ է ձեր փեսացուն:

ՄԱՐԹԱ.—Պապանձուէր լեզուս, որ քո բերանը չը ձը-  
գէի էդ բանը...

ՇՈՂԻ.—(Շոյանով) Դէ՛, լա՛ւ, առա՛, ասա՛... մէկէլ  
այսուհետեւ ինձնից ոչինչ չէք կարող թագցնել... ասա է՛,  
տեսնեմ, ո՞վ է էդ գոված տղան: (Մարթան լուում է, մտնում  
է Նահապետը):

ՏԵՍԻԼ 2

ՆՈՅՆՔ ԵՒ ՆԱՀԱՊԵՏ

ՇՈՂԻ.—Դու չես ասիլ, միեւնոյն է, Նահապետից կ'ի-  
մանամ:

ՆԱՀԱՊԵՏ.—Աստծոյ բարին(մի կողմ)ոստանանք քեզ տանի:

ՇՈՂԻ.—Ի՞նչ ես յօնքերդ կիտել, փեսայ ջան:

ՆԱՀԱՊԵՏ.—Ի՞նչ ունիմ ուրախանալու:

ՇՈՂԻ.—Դու որ չուրախանաս, ո՞վ պիտի ուրախանայ.  
(Ուշադրութիւն չէ դարձնում Մարթային, ո՛ր ձեռքերով լու-  
լու նշաններ է անում Նահապետին) Լսեցի թէ աղջիկդ մար-  
դու ես տալիս:

ՆԱՀԱՊԵՏ.—Աղջկա՞նս... ո՞վ տասց քեզ (զայրոյթով նա-  
յում է Մարթային) Մարթա...



21449-66 3

ՇՈՂԻ.—Ո՛չ ոք չէ ասել, հէնց այնպէս, երազումս տեսայ:  
ՆԱՀԱՊԵՏ.—Յիմար երազներ ես տեսնում, ա՛յ կնիկ,  
(Բարեկութամբ Մարթային) վեր կաց, Մարթա, պատրաս-  
տութիւններ տես, մեր տունը հիւրեր են զալու (Մարթան  
գնում է կից սենեակը):

ՇՈՂԻ.—Ո՞վ է եկողը, փեսացուն հօ չէ՞:

ՆԱՀԱՊԵՏ.—Ի՞նչ համար մէկ չէ՞, ով ուզում է, թող լինի:

ՇՈՂԻ.—Ո՞նց կըլնի, որ իմ քրոջ աղջկան մարդու տան  
և ես չիմանամ, թէ ո՞ւմ են տալիս:

ՆԱՀԱՊԵՏ.—Ա՛խ, քեզ բան ասելը ցա՛ւ է, քենի ջան,  
էնպէս լեզու ունիս որ...

ՇՈՂԻ.—Էլի՞ ասացիր այդ խօսքը, Նահապետ, իմ լե-  
զուն քեզ ի՞նչ է արել:

ՆԱՀԱՊԵՏ.—Էհ, ես ձեզ կանանցդ լաւ եմ ճանաչում.  
բոլորդ էլ մի ծառի պտուղներ էք (Նեղում է).

Ինձ որ հարցնէք՝ կնկայ հետ  
Դործ չը բռնէք դուք երբէք.  
Թէ սխալել էք, գործ բռնել, } Կրկնում է  
Վա՛յն եկել է, ձեզ տարել... }  
Թէ որ մի գաղտնիք ունիք,  
Կնկայ բերան չը ձգէք  
Ումնից պիտ գաղտնիք մնայ, } Կրկնում է  
Աւաջ կինը կ'իմանայ:  
Ինչքան նեղ տեղը լինէք,  
Կնկան խորհուրդ չը հարցնէք.  
Թէ խորհուրդ է նա տել, } Կրկնում է  
Հակառակը պիտ վարուել:  
Աստուած՝ որ կնիկ է ստեղծել,  
Մարդկանց դրանով է պատժել,  
Երկար մազեր է տել, } Կրկնում է  
Խելքն էլ զլսիցը առել:

ՇՈՂԻ.—(Նեղում է) Դո՛ւ աղ կնիկը տասը մարդ արժէ. } Կրկն-  
Անցեալ մարդը մի կնիկ չարժէ, } նում է

Ես իմ Նազիկին արեւին մեռնիմ,  
Կ'ուզեմ ես նրան բախտաւոր տեսնիմ:

Գեաղա-գիւղի չեմ տալ բալիս, } Կրկնում է  
Տեսնեմ քեզ մօտ ո՞վ է գալիս }  
Ես իմ Նազիկին արեւին մեռնիմ,  
Կ'ուզեմ ես նրան բախտաւոր տեսնիմ: Կրկնում է

Գէ՛հ, հիմա ասա, տեսնեմ ո՞վ է քո ընտրած փեսացուն :  
ՆԱՀԱՊԵՏ.— Էս մի անգամ խաթր կ'անեմ՝ կ'ասեմ, եթէ  
միայն խօսք կը տաս, որ չես խառնուիլ էս գործում :

ՇՈՂԻ.— Չորանայ լեզուս, թէ բան ասեմ :

ՆԱՀԱՊԵՏ.— (Կամացուկ) .— Որ էդպէս է, իմացիր ուրեմն :

Աղջիկս տալիս եմ Չփլաղ գիւղի քէօնվա Օհանի տղայ Արշակին :

ՇՈՂԻ.— (Չարմացական ծաղրով) Ո՞ւ՛մ . . . էն շաշի՛ն . . .

ՆԱՀԱՊԵՏ.— Շաշը դո՛ւ ես, յիմարն էլ հետը. (Նազիկիկն)

Աղջի, գնա մօրդ օգնիր. (Նազիկի կ'ընում է) : Ա՛ կնիկ, ես  
քեզ չասացի՞ որ լեզուդ կարճ պահես :

ՇՈՂԻ.— Ես հօ բան չեմ ասում . . . Ես միայն հարցրի թէ՛  
ասածդ էն տղան հօ չէ՞, որ գլխի ծայրը մի քիչ պակաս է :

ՆԱՀԱՊԵՏ.— (Չայրագին) Ի՞նչ է նշանակում «ծայր պա-  
կաս է» . . . Դու նրա խելքը չափե՞լ ես, ի՞նչ է . . .

ՇՈՂԻ.— Ես որ չեմ չափել, քեզ յայտնի չէ՞ որ նա շաշ է :

ՆԱՀԱՊԵՏ.— Շա՛շ է, թէ խելք է՛ այդ է . . . կնիկ ուզելու

համար մարդուս խելքը ինչի՛ն է պէտք, աղջիկս հարուստ կ'ապրի,  
ամեն բան առատ կ'ունենայ, նրան էլ ուրիշ ի՞նչ է հարկաւոր :

ՇՈՂԻ.— Ախր, Նազիկը ուրիշին է սիրում . . .

ՆԱՀԱՊԵՏ.— (Բարկուրեամբ) Լ՛հը . . . որ ասացի լեզու է

խառնելու . . . Չհանդամը թէ՛ սիրում է . . . Սիրելու ս՞ր է, այ  
կնիկ, Չհիրութիւն է, մարդու կ'երթայ և կը մոռանայ : Մէկ էլ

Աստուած գիտէ, թէ ե՞րբ է դալու Սադօն զինուորութիւնից . . .

ՇՈՂԻ.— Քե՞զ ինչ . աղջիկը համաձայն է սպասելու : Թո՛ղ  
ուշ լինի, նուշ լինի . իւր սրտի ուզածը լինի :

ԾԱՌԱՅ.— (Ինուսեն կանչելով՝ մտնում է ներս հապենայ)

Գալիս ես . . . դալիս ես հիւրերը . . .

ՆԱՀԱՊԵՏ.— Գնա՛, գնա Մարթային իմաց տուր :

ԾԱՌԱՅ.— (Վազում է կից սենեակը եւ քիչ յետոյ

դուրս է գալիս և նորից վազում է դեպի դուրս) :

ՆԱՀԱՊԵՏ.— (Շողիին) Մէկ էլ եմ ասում, Շողի, լեզուդ

կարճ պահիր, թէ չես ուզում, որ անհամութիւն դուրս գայ  
(Դուրս է գնում հիւրերին ընդառաջ) :

ՏՅՍԻՒ 3

ՆԱԶԻԿ ԵՒ ՇՈՂԻ

ՆԱԶԻԿ.— (Վազելով գալիս է փաթաբուում Շողիին) Վայ,  
մօրքուր ջան . . . վախենում եմ . . . Ի՞նչ անեմ, ո՞նց ազատ-  
ւեմ էս ցաւիցը : Ինձ ուզում են զօրով մարդու տալ էդ ե-

կողին, իսկ ես լաւ է մեռնեմ, քան թէ զրկուեմ Սադօից . . .  
ՇՈՂԻ.— (Փաղափօշով) Մի՛ վախենար աղջիկս . ես էդ  
բանը մի կերպ կը խանդարեմ : Դու ինձ լսիր (Երգում է) :

Դարդ մի՛ անիր, Նազիկ ջան, } Կրկնում է  
Ես քո պաշտպանն եմ, դուրբան, }  
Ինչ ասեմ, դու ինձ լսիր,  
Յոյց տուածիս պէս վարուիր,  
Ես կը գամ հօրդ հախիցը,  
Փրկեմ քեզ էդ ցաւիցը :

ՆԱԶԻԿ.— (Երգում է) Ես սիրում եմ իմ եարին, } Կրկնում է  
Արդէն հինգերորդ տարին. }  
Ես նրան եմ սպասելու,  
Ուրիշ մարդ չեմ ուզելու,  
Նա բլրու է, իսկ ես վարդ,  
Նրա հետ կ'ապրեմ անդարդ :

ՇՈՂԻ.— Թող փեսան զայ հարսնատես, } Կրկնում է  
Ո՞նց եմ փախցնում նրան ես, }  
Ով լինելու կ'իմանայ .  
Թէ կարէ, թող դիմանայ .  
Գալիս՝ թող զայ նազէ նազ,  
Մեզնից փախչէ վազէ վազ :

Քիչ առաջ էլ ասում էի հօրդ, որ դու Սադօին ես սպա-  
սում՝ ինչքան նա ուշանալու էլ լինի, լաւ է ասի, ուշ լի-  
նի, նուշ լինի :

ՆԱԶԻԿ.— Հա՛, մօրքուր ջան, հա . . . (Համբուրում է նրան) :

ՏՅՍԻՒ 4

ՆՈՅՆԻ, ՆԱՀԱՊԵՏ, ՕՀԱՆ, ԱՐՇԱԿ, ՄԱՐԹԱ ԵՒ ԾԱՌԱՅ

ՕՀԱՆ.— (Սուազ գալով՝ երգում է)  
Օհանն եմ, Օհանն եմ, } Կրկնում է  
Չփլաղ գիւղի քէօնվան եմ. }  
Վրեն մեծ չին ա,  
Սէլսի ստարշինա  
Նաչախիկից ստացած ունիմ ես մենզալ  
Էսօր-էգուց դառնալու եմ զեներալ :

Օհանն եմ, Օհանն եմ,  
Չփլաղ գիւղի քէօնվան եմ .  
Ունիմ մի գաւակ,  
Անունն է Արշակ

Կ'ուզեմ առնել նրա համար մի աղջիկ,  
Մեր տան լայեղ՝ սիրուն, համեստ ու փափրիկ  
Օհանն եմ, Օհանն եմ,  
Չփլաղ գիւղի քէօճկան եմ:

ԱՐՇԱԿ.— (Երգում է)

Ես էլ իմ հօր տղան եմ  
Չեր սպասած փեսան եմ (Իրսպանից հանում է մի  
խնձոր՝ ծառային)

Բա՛ց խուրջինս, տո՛ւր դանակը,  
Խնձոր կիսեմ, տամ եարիս  
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ:

Հէրս ինձ էտեղ բերաւ,  
Սիրուն կնիկ խոստացաւ.

Բա՛ց խուրջինս, տո՛ւր դանակը:  
Խնձոր կիսեմ, տամ եարիս,  
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ:

Կնկանս պիտ եար կանչեմ,  
Ամբողջ օրը պի՛նդ պաչեմ

Բա՛ց խուրջինս, տո՛ւր դանակը  
Խնձոր կիսեմ, տամ եարիս  
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Զամեցէք, համեցէք, նստեցէք. ճանա-  
պարհից յոգնած կը լինիք: Դէսը նստիր, քէօճկա Օհան, հա-  
մեցէք, պարոն Արշակ:

ՄԱՌՍՅ.— (Վերցնում է Օհանի ձեռնափայտը եւ Արեակի  
խուրջինը ու դուրս է գնում):

ԱՐՇԱԿ.— (Կտրում է խնձորը, առաջարկում է միւսներին,  
բայց երբ նրանք պարզում են ձեռներին, շատ քերական  
ձգում եւ ուտում):

ՆԱՀԱՊԵՏ.— Ա՛ կնիկ, մեր հիւրերին պատիւ առը, մի  
լաւ հայ պատրաստիր մեզ համար:

ԱՐՇԱԿ.— Ես հայը մուրաբայով եմ ուզում:

ՕՀԱՆ.— Սըս...ս... (Նազիկ եւ Մարթա գնում են):

ՏԵՍԻՆ 5

ՆԱՀԱՊԵՏ, ՇՈՂԻ, ՕՀԱՆ ԵՒ ԱՐՇԱԿ

ՕՀԱՆ.— (Ձննում է սեղանը, նրա ամեն մի շարժում-  
քին հետեւում է Արեակը: Յոյց տալով Շողիին) Էս կինը ո՞վ է:

ՆԱՀԱՊԵՏ.— Քենիս է:

ՕՀԱՆ.— Հը՛մ...

ԱՐՇԱԿ.— (Գլուխ է տալիս Շողիին եւ մեկնում նրան՝  
իւր կծած խնձորը):

ՕՀԱՆ.— Սըս...

ԱՐՇԱԿ.— (Շատ ցիւց է փառում ձեռքը):

ՆԱՀԱՊԵՏ.— Դէ՛հ, ասացէք՝ տեսնեմ, ի՛նչպէս է ձեր հը-  
րամանոց տրամադրութիւնը:

ՕՀԱՆ.— Փառք Աստծոյ, լաւ ենք:

ԱՐՇԱԿ.— Փառք Աստծոյ, լաւ ենք:

ՕՀԱՆ.— Երէկ էինք ուզում գալ, բայց պրիտաւը կան-  
չել էր. գնացի նրա մօտ: Լաւ բարեկամս է, ասում է՝ զըբաս-  
տի, ի՞վան կարպիչ, զաչէ՛մ տուղի—տուղի չալթայ—բայ-  
թայ, Ասէլ կ'ուզի թէ՛ իսկի չես գալիս մօտս՝ մի քիչ զրոյց  
անենք, Ես էլ ասի՝—նա ասնավանի վիշի իզվօղչիկ,—այսինք  
թէ՛ դործի տէր եմ, զրոյցի գլուխ չունիմ:

ԱՐՇԱԿ.— (Միծաղում է) Հը՛մ... հը... հը...

ՕՀԱՆ.— (Նրան սաստելով) Արշակ... սըս...

ՆԱՀ.— Հրամանքդ մեծ մարդկանց մօտ պատիւ ունիք:

ՕՀԱՆ.— (Ուղղում է վզից կախուած մեծ շփուտներ) Ու-  
էզդնի նաչաչիկը ինձ որ տեսնում է, միշտ ասում է—  
«Չգրասթի կավալէր»:—Նաչաչիկի կնիկս էլ... (Մտնում է  
Նազիկը՝ բերելով նրանց քեյ եւ շփուտ):

ՆԱՀ.— Զամեցէք, հայ անուշ արէք:

ԱՐՇԱԿ.— (Նազիկին տեսնելով ծիծաղում է. հրում է  
արմուկով հօրը եւ աչքով է անում):

ՕՀԱՆ.— (Նստն է ածում որ հանգիստ մնայ) Ողորմած հո-  
գի կնիկս էլ միշտ ինձ համար հայ էր շինում: Հիմա դոււար  
է բանս, ծառայի արածը էն չէ՛, ինչ որ կնկանը: Դրա հա-  
մար էլ ուզում եմ որդուս պատկեմ:

ԱՐՇԱԿ.— (Տեսնելով որ հայրը դգայով է խառնում քե-  
յը, ինքն էլ մասն է դնում քեյի մեջ եւ ուզում է խառնել)  
Վա՛յ... վա՛յ... վա՛յ...

ՆԱՀ.— Ա՛ն, աս դգայով խառնիր թէյը, քէ՛ մատաղ:

ԱՐՇԱԿ.— (Անում է դգայը եւ կոթով խառնում քեյը):

ՕՀԱՆ.— Հնազանդ ու աշխատող հարս եմ ուզում. էնպէս  
որ իմ տղիս էլ մտիկ անի, ինձ էլ: Մեր գիւղի աղջկանց մէջ չեմ  
գտնում ուզածս: Հիմա եկել եմ գոված աղջկանդ տեսնելու:

ԱՐՇԱԿ.— (Շափարը բռնելով վերցնում է եւ դնում գրպանը,  
յետոյ մի մի կտր հանում, բերանն է նետում):

ՕՀԱՆ.— (Տեսնելով խիստ) Ա՛րշակ... տեղը դի՛ր...

ԱՐՇԱԿ.—(Շատ հանում է բերանի շախարհերը եւ դը-  
նում շախարհամանում):

ՕՀԱՆ.—Հա՛, խօսքս կհոտա միաց: Նաչախնիկի կնիկը  
առանց ինձ չի կարող ապրել:

ԱՐՇԱԿ.—Ձի կարող ապրել...

ՕՀԱՆ.—Կանչում է ամէն անգամ ու ասում՝ «Պատու-  
չի, Իվան Կարպիչ»:

ԱՐՇԱԿ.—(Յանկարձ լալով) Հայրիկ ջան կնիկ եմ ուղում...

ՕՀԱՆ.—Սըս...

ԱՐՇԱԿ.—Դո՛ւ չէիր ասում ճանպիհն, թէ որ աղջկան հա-  
ւանիմ, ինձ համար պիտի ուղես: Դէ՛ ես հաւանում եմ է՛րի:

ՕՀԱՆ.—Ա՛րշաակ... Ախր էդպէս յանկարծ չի լինիլ, որ-  
դի ջան: Խօսենք, տեսնենք...

ԱՐՇԱԿ.— Էլ ի՞նչ կայ խօսելու. աղջիկը էս չէ... Դ  
ես սրան հաւանում եմ, պրծաւ գնաց:

ՕՀԱՆ.—Լաւ, լաւ, քիչ սպասիր:

ՇՈՂԻ.—(Սնանիկ) Թող արա, ես դրա հետ մի քիչ զրոյց  
ա եմ, հանդտացնեմ: Արի, Արշակ ջան, արի գնանք մեր  
պարտէզը և ես քեզ խնձոր տամ:

ՆԱՀԱՊԵՏ.—(Տեղից վեր թռչելով) Ո՛չ, պէտք չէ, պէտք  
այ գնալու: Ես կ'ատեմ ծառային՝ խնձորը էտեղ բերի:

ՕՀԱՆ.—Թո՛ղ, նահապետ, թո՛ղ գնայ դուրսը մի քիչ  
պատի, ես էլ քեզ հետ մի քիչ առանձին խօսելու բան ունիմ:

ՇՈՂԻ.— Արի, Արշակ ջան (բռնում է քելից եւ դուրս  
սանում):

ՆԱՀԱՊԵՏ.—(Կամացուկ Շողիին) Թէ դրան աւելորդ բան  
ես սեղ լեզուդ արժատախիլ կ'անեմ:

ՇՈՂԻ.—Հանդիստ կաց, փեսայ ջան, հանդիստ կաց (Գը-  
նում են):

ՆԱՀԱՊԵՏ.—(Իննի իրան) Ախ, Մարթա, Մարթա, ի՞նչ  
ասեմ լեզուիդ... (Օհանին) Մէկ բաժակ էլ անուշ արէք,  
քէօ՛՛վա Օհան:

ՕՀԱՆ.— Բո թանկագին խաթէր համար:

ՆԱՀԱՊԵՏ.— Չայ բե՛ր, ա՛ղջիկ:

ՆԱՀԱՊԵՏ.—(Գալիս է եւ բաժակները սանում):

ՕՀԱՆ.— Հէ՛յ, հէ՛յ... քանի չայ եմ խմում, ողորմաճ-  
հոդի կնոջս եմ միտս բերում... (Առուրիւն): Դէ՛հ, նահա-  
պետ, հիմայ դործից խօսենք: Բո նաղիկը լաւն է, խօսք չկայ,  
սիրուն առողջ աղջիկ է, բայց մի բան ունիմ հարցնելու: Էս  
տեղի աղերանց վրայ հօ աչք չունի... Դու գիտես մեր բա-

նը. աղիս էտեղը (ցոյց է ցալիս գլուխը) քիչ դատարկ է,  
նրան կնիկը միշտ կարող է խաբել: Դրա համար էլ համեռտ  
աղջիկ եմ փնտռում:

ՆԱՀԱՊԵՏ.— Չէ՛, աղբեր Օհան, չէ՛, էդպէս բան չկայ:  
Ճիշտ է, մի աղի հաւան էր, բայց նրան էլ զինուոր տա-  
բան: Երեք տարուց աւել է, ինչ ո՛չ մի լուր չկայ նրանից.  
ասում են՝ Ռուսաստան են դադարկել:

ՕՀԱՆ.— Էդ ոչինչ, անցած բան է. բաւոր էդպէս է, մեր  
գործը գլուխ կըզայ (Մտնում է Նաղիկը քելերով: Խօսքը փոխ-  
ում է): Հա՛, նաչախնիկի կնիկը կանչում է ինձ ու ասում՝  
— «Պատուսի, Իվան Կարպիչ»...:

ԱՐՇԱԿ.—(Գոնեից յանկարձ ներս է մտնում երգելով).

Բայ խորջինս, տո՛ւր դանակը,  
Խնձոր կիսեմ, տամ ետեւ  
Դիւիմ, դիւիմ, դիւիմ, դիւիմ:

ՆԱՀԱՊԵՏ.—(Վեր թռչելով) Վա՛յ, հէր օրհնած, ինձ վա-  
խեցրիր:

ՕՀԱՆ.— Ա՛յ աղայ, դու սուս կենայո՞ւ ես, թէ՞ ոչ:

ՄԱՐԹԱ.—(Գրից կանչում է) Նահա՛պետ...

ՆԱՀԱՊԵՏ.— Գա՛լիս եմ, գա՛լիս: Ներդուրթիւն կ'անես,  
Օհան ջան, հիմա գա՛լիս եմ (Գնում է):

Տ Ե Ս Ի Լ Ե

ՇՈՂԻ, ՆԱՀԱՊԵՏ, ՕՀԱՆ ԵՒ ԱՐՇԱԿ

ՇՈՂԻ.—(Որ մեկ էր Արշակի հետ, հրում է նրան Նաղի-  
կի կողմը, իսկ ինքը մտնում է Օհանին: Արշակը կանգ-  
նում է Նաղիկի առջո՛յ ժպիտ դեմքին եւ խնձոր ծամում.  
Երբեմն առաջարկում է նրան կծել խնձորից, բայց Նաղիկը  
նրանից դարձնում է երեսը): Ո՞նց է, հաւանեցի՞ր մեր աղջը-  
կան, քէօ՛՛վա Օհան:

ՕՀԱՆ.— Թաքցնելու բան չունիմ, լաւ է, հաւանում եմ:

ՇՈՂԻ.— Հրամանացդ որդին էլ լաւ աղայ է, խտակ Աս-  
արծոյ գառը. իրար կը զատեն: Ատենք՝ մեր աղջիկը էնպէս  
լաւ բնաւորութիւն ունի, որ ու՛մ կնիկը ատես, կարող է  
լինել. կ'ուզէ՛ հասարակ մարդ ըլի, կ'ուզէ՛ քէօ՛՛վայի...  
կ'ուզէ՛ ջահէլ ըլի, կ'ուզէ՛ տարիքով կամ որբեւայրի... թէ  
ճիշտը կ'ուզես, իմ ցանկացածն էլ էն է, որ նրա մարդը շատ  
ջահիլ չըլի, որպէսզի թէ՛ մարդութիւն անի և թէ՛ հէրութիւն...

ՕՀԱՆ.— Հը՛մ...

ՇՈՂԻ.—Թէ դըրուսոր կ'ուզես, ես ծանր մարդուն ջա-  
հէլ-ջհուլից աւելի եմ դասուծ...

ՕՀԱՆ.—Ասածդ յիմար բան չէ...

ՇՈՂԻ.—Քէօհվա Օհան, արդեօք, աւելի լաւ չէ՞ր լի-  
նէր, եթէ դո՛ւ ուզէիր աղջկանը... քան թէ որդուդ հա-  
մար ես ուզուծ:

ՕՀԱՆ.—Ես էլ այդ մասին մտածեցի...

ՇՈՂԻ.—Մի դէսը արի, բան ունիմ ասելու: Արշակ դու  
էլ արի այստեղ: (Վեցնում է երկուսի ձեռքերից եւ առաջ  
բերում: Երգում է:)

Նագիկի պէս սիրուն հարս.

ԱՐՇԱԿ (Պարում է) Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՇՈՂԻ.— Զես գտնի, որքան ման գաս.

ԱՐՇԱԿ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՕՀԱՆ.— Այո՛, լան է, ճիշտ՝ որ լան է.

ՇՈՂԻ.— Ասուած վկայ, որ շատ լան է:

ԱՐՇԱԿ.— Մրա պէս աղջիկ նագանի.

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ԱՐՇԱԿ.— Քէօհվի կնիկ կը սագի.

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ԱՐՇԱԿ.— (Լսում է զարմացած)

ՕՀԱՆ.— Էդ էլ ճիշտ է, էդ շատ ճիշտ է.

ՇՈՂԻ.— Ասուած վկայ որ շատ ճիշտ է...

ՕՀԱՆ.— Տղիդ տանք ուրիշ աղջիկ.

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՕՀԱՆ.— Նագիկին տանք քեզ կնիկ.

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՕՀԱՆ.— Այ, թէ լան է, ճիշտ որ լան է.

ՕՀԱՆ.— Էդ ասածդ՝ խաչ՝ որ լան է:

ԱՐՇԱԿ.— (Բարկուրեամբ)

ՕՀԱՆ.— (Սպառնալիքով)

ԱՐՇԱԿ.— Ո՞նց էր տալիս ուրիշին...

ՕՀԱՆ.— Հօ'պ... հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՖՈՂՈՐԸ.— Առանց հարցնելու փեօխն,

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
(Հանգստացնելով Արեակին)

ՕՀԱՆ.— Դատարկ բան է, դա մի խօսք է,

ԱՐՇԱԿ.— Բերնից թըռած հանագ խօսք է:

ՕՀԱՆ.— Ո՛չ որին չեմ տալ հարսս:

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՕՀԱՆ.— Սո՛ւս, թէ չէ՛ կըգայ թարսը:

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ԱՐՇԱԿ.— Պա դու խի՞ ես կնիկ խոստանում,

Էստեղ բերում, յետոյ խըլում:

Զօրի բա՞ն է, չեմ տալիս:

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՕՀԱՆ.— Ահա ապտակ է գալիս:

ՇՈՂԻ.— Հօ'պ, հօ'պ, հօ'պրտա թըմբա՛...  
ՕՀԱՆ.— Տօ՛, մի՛ նայիր էս յիմարին,

ԱՐՇԱԿ.— Հազար գոռաս, չեմ տալ եարիս:

ՆԱՀԱՊԵՏ.— (Աղմուկի վրայ ներս վագելով՝ երգում է:  
Իսկ Նագիկը փախչում է)

ՕՀԱՆ.— Ա՛յ ինձամիք ի՞նչ եղաւ...  
ՆԱՀԱՊԵՏ.— Մա, սա սիրտս շուռ բերա...

ԱՐՇԱԿ.— Զեր մէջ ի՞նչ կատու անցաւ...

ՕՀԱՆ.— Հարսիս խըլել ուզեցաւ.

ԱՐՇԱԿ.— (Յարձակուելով Արեակի վրայ)

ՕՀԱՆ.— Տօ՛, մի թո՛ղ է... տօ՛, մի թո՛ղ է՛:

ԱՐՇԱԿ.— Դու մի ասա՛ կնկա գող է:

ՆԱՀԱՊԵՏ.— Լա՛ւ, լա՛ւ, հանգստացէ՛ք, խնամիք. հան-  
գստացէ՛ք: Ախր ի՞նչ պատահեց ձեզ. լաւ, բարով նստած  
խօսում էիք ու յանկարծ հէր ու որդի էդպէս աղմուկ սար-  
քեցիք:

ՕՀԱՆ.— (Ինքզինքը զսպելով) Է՛հ, պատահածը պատահեց:

ԱՐՇԱԿ.— (Լալով) Պա խի՞ է հարսը ձեռիցս խլում...  
ՆԱՀԱՊԵՏ.— Ա՛յ տղայ, ո՞վ է խլում: (Շողիին) Շո՛ղի՛...

Էս բանու՞մը քո մատը խառն է... (Հիւրերին) Դէ՛հ, նստե-  
ցէ՛ք և հանգստացէ՛ք, ես էլ այս րոպէին գալիս եմ: (Գնում է)

Տ Ե Մ Ե Լ Դ

ՕՀԱՆ, ԱՐՇԱԿ, ՇՈՂԻ ԵՒ ՆԱԶԻԿ

ՆԱԶԻԿ.— (Մտնելով) Էս ի՞նչ կրակի մէջ եմ ընկել, մօր-  
քուր ջան, մէկը յիմար, միւսը ծեր, իմ պատճառով կըռ-  
ւում են...  
ՇՈՂԻ.— Մի՛ վախենար, էդ բոլորը իմ սարքած բանն է:  
Ուզում էի էնպէս կռուացե՛լ, որ միանգամից պրծնէ՛ք դը-

բանցից, բայց չեղաւ: Ոչի՛նչ, դու քիչ համբերուի՞րն ու-  
նեցիր, բոլորը լաւ կը վերջանայ:

ՕՀԱՆ.— (Կամաց կամաց մօտեցում է Նազիկին, նոյնն ա-  
նում է Արշակը):

ԱՐՇԱԿ.— (Երգում է)

Սիրտս վառուել է կրակ, Նազիկ ջան:

ՕՀԱՆ.— Ինձ մորթեցիր անդամակ, Նազիկ ջան:

ԱՐՇԱԿ.— Ջան ասենք, ջան լսենք, Նազիկ ջան:

ՕՀԱՆ.— Քեզ պէս կնիկ ինձ կը սագի, Նազիկ ջան:

ԱՐՇԱԿ.— Աղջի, հոգիս մի հանիր, Նազիկ ջան:

ՕՀԱՆ.— Կը տամ ոսկէ մատանի, Նազիկ ջան:

ԱՐՇԱԿ (Անցնում է եւ կանգնում հօր ու Նազիկի մէջտեղը)

Դէ՛ ասա՛, շուն ասա՛, Նազիկ ջան:

Քո դարդիցը, տե՛ս, ի՛նչ եղայ, Նազիկ ջան:

ՕՀԱՆ.— (Առաջ է գալիս եւ հրում Արշակին):

Քէօհվի կնիկ կը լինիս, Նազիկ ջան:

ԱՐՇԱԿ.— (Հրում է հօրը)

Իզի՞ծ եարի կը սիրես, Նազիկ ջան:

ՇՈՂԻ.— (Թելադրելով Նազիկին):

Ասա՛, հա՛, ասա՛, հա՛, Նազիկ ջան:

Մի՛ վախենար գործդ լաւ է, Նազիկ ջան:

ՆԱԶԻԿ.— Էգուց ես քեզ խօսք կը տամ, Արշակ ջան:

Կուգեմ քո տուն ես հարս գամ, Օհան ջան:

ՇՈՂԻ (Օհանին) Տեսնելը սիրելը մէկ եղաւ

Ուրախ է որ քեզ պէս փեսայ ունեցաւ:

ՕՀԱՆ.— Մատաղ լինիմ սեւ աչիդ, Նազիկ ջան:

ԱՐՇԱԿ.— Ես կարօտ եմ քո պաշիդ, Նազիկ ջան:

ԲՈՂՈՐԸ.— Տեսնելը, սիրելը մէկ եղաւ,

Ուրախ եմ, որ քեզ պէս փեսացու գտաւ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

## Բ. Ա Ր Ա Ր

Բեմը ներկայացնում է նոյն սենեակը

### Տ Յ Ս Ի Լ 1

ՆԱԶԻԿ, ՇՈՂԻ, ՅԵՏՈՅ ՍԱԳՕ

ՆԱԶԻԿ (Երգում է) Սիրեցի եարս տարան...

Եարա սուին ու տարան...

Էս ի՛նչ զուլում աշխարհ է,

Պոկեցին սիրտս ու տարան:

Յաւըս խորն է ծար չըկայ,

Ճար կայ, ա՛խ, ծարող չըկայ...

Էս ի՛նչ զուլում աշխարհ է,

Սրտակից ընկեր չըկայ...

Լաւ օրերս զնացին,

— Ափսո՛ս, — ասին զնացին.

Էս ի՛նչ զուլում աշխարհ է,

Սեւ դարդերս մնացին:

ՇՈՂԻ.— (Երեւում է պատուհանից. տեսնելով որ սենեա-  
կում ո՛չ ոք չըկայ բացի Նազիկից, նշանով մօտ է կանչում  
եւ լուռ խօսում):

ՍԱԳՕ.— (Երեւում է պատուհանից եւ քիչ յետոյ դրսից  
երգում է): Հարբբա՛ն...

ՆԱԶԻԿ.— (Ուրախութիւնից վեր բռնելով՝ արձագանգում  
է) Ի՛րանօթ ձա՛յն:

ՍԱԳՕ.— (Երգելով) Սիրել եմ սէրն երեսին,

Անթառամ թերն երեսին.

Ով իմ սիրածն ինձ չըտայ.

Աստոյ կրակն երեսին:

ՆԱԶԻԿ.—

Հարբբա՛ն...

ՍԱԳՕ.—

Ձանէ ջա՛ն...

ՆԱԶԻԿ.—

Աչքս ձգել եմ սարին,

Ոտս տուել եմ քարին.

Գիշեր-ցորեկ թաց աչքով,

Սպասում եմ իմ եարին:

- ՍՍԳՕ. — Հարրրա՛ն...
- ՆԱԶԻԿ. — Զանէ ջան:
- ՍՍԳՕ. — Բուսել ես բախչի միջին,  
Շամամի թաղի միջին,  
Գիշեր-ցորեկ միալար՝  
Դո՛ւ ես իմ խաղի միջին:
- ՍՍԳՕ. — (Յանկարծ մտնում է Շողիի հետ) Նազիկ ջան...
- ՆԱԶԻԿ. (Նրան փաթաթելով) Սազօ ջա՛ն...
- ՍՍԳՕ. — Ես քեզ մատա՛ղ...
- ՆԱԶԻԿ. — Էս ի՛նչ բախտաւորութիւն է, ես իմ աչքերին  
չեմ հաւատում... այդ ե՛րբ ես եկել, որ ես չեմ իմացել:
- ՍՍԳՕ. — Ժամանակին հասայ Նազիկ ջան, այնպէս էի  
չտապում, կարծես սիրտս զգում էր, որ քեզնից խլում են:
- ՆԱԶԻԿ. — Ա՛խ, Սազօ ջան, սիրտս է՛նպէս է տանջուել...
- ՍՍԳՕ. — Գիտեմ, գիտեմ, Նազիկ ջան, Շողին ինձ ամեն  
բան պատմեց:
- ՆԱԶԻԿ. — Այո՛, միայն մօրքոյրս է ինձ օգնում ու յոյս  
տալիս:
- ՍՍԳՕ. — Հիմա հանգիստ եղիր, ամեն բան մեր ուղածին  
պէս կը վերջանայ: (Բոլորը միասին երգում են):
- ՆԱԶԻԿ. — Արևը նոր ծագել է,  
Սիրած եսրս եկել է.
- ԲՈՂՈՐԸ. — Շախկով շուխկով իմ ետը,  
Բոյով-բուսով իմ ետը:
- ՍՍԳՕ. — Աչերիդ եմ կարօտել,  
Գժի նման եմ դառել.
- ԲՈՂՈՐԸ. — Շախկով-շուխկով իմ ետը,  
Բոյով-բուսով իմ ետը:
- ՆԱԶԻԿ. — Հազար տղայ ինձ ուզի,  
Ես ուրիշին չեմ ուզի:
- ՄԻԱՍԻՆ. — Շախկով-շուխկով իմ ետը,  
Բոյով-բուսով իմ ետը:
- ՍՍԳՕ. — Դարդը սրտից չէի հանում,  
Քեզ մտեան չէի անում:
- ՄԻԱՍԻՆ. — Շախկով-շուխկով իմ ետը,  
Բոյով-բուսով իմ ետը:

- ՇՈՂԻ. — Դէ՛հ, հերիք է, Սազօ, հիմա դնանք:
- ՆԱԶԻԿ. — Ո՛ւր էք գնում... ինձ միտակ մի՛ թողիր,  
Սազօ...  
ՇՈՂԻ. — Համբերի՛ր, Նազիկ ջան, դեռ պէտք չէ, որ  
Սազօյ դալն իմանան, թէ չէ՛ ամէն բան կը փջանայ. զը-  
նանք Սազօ:  
ՆԱԶԻԿ. — (Գրկելով ցրտ) Սազօ ջա՛ն...

ՏԵՍԻԼ 2

ՆՈՅՆՔ ԵՒ ԱՐՇԱԿ

- ԱՐՇԱԿ. — (Ներս է մտնում՝ օտար շեմփին դեմ խալով՝ ընկ-  
նում է: Ձեռքին ունի գունաւոր քաշկիմակ, որի միջից գը-  
լորում են զանազան միզեր):
- ՆԱԶԻԿ. — (Բացազանցելով) Ա՛հ...  
ՍՍԳՕ. — (Շտապ հեռանալով Նազիկից) Սա ո՞վ է...  
ՇՈՂԻ. — Սո՛ւս, սա մեր փեսացուն է:  
ԱՐՇԱԿ. — (Վեր կենալով եւ մեզերը հաւաքելով) Ես էս  
տան փեսացուն եմ: (Շողին եւ Սազօն գնում են):

ՏԵՍԻԼ 3

ՆԱԶԻԿ ԵՒ ԱՐՇԱԿ

- ԱՐՇԱԿ. — Ըհր՛... էս էլ քեզ համով-համով բաներ...  
(Ետը նայելով) Նրանք գնացին:
- ՆԱԶԻԿ. — Գնացին:
- ԱՐՇԱԿ. — (Ուրախ ժպտում է) Հը՛ր... (Երգում է):  
Եկայ, եկայ ետքիս մօտ,  
Նրա պաչին իմ կարօտ.  
Սիրունիկ, սիրունիկ աղջիկ ես,  
Մեղրի պէս, մեղրի պէս քաղցրիկ ես,  
Էսօր տէրտէր պիտ կանչեմ,  
Էլ չեմ կտրող ես սպասել.  
Կ'ուզեմ շուտ, կ'ուզեմ շուտ պսակելի,  
Անուշիկ, անուշիկ կին առնել:  
Երբ քեզ կանչեմ՝ Նազիկ ջան, —  
Դու ծայն կը տաս՝ հա՛ ջանջան, —  
Ուրիշին, ուրիշին չը սիրես,  
Եթէ ո՛չ՝ ինձանից ծեծ կ'ուտես:
- ՆԱԶԻԿ. — (Մեկուսի) Էս էլ լաւ է, դեռ չպսակուած՝

ծեծ է խոտանում. (նրան) չէ, Արշակ ջան, բացի քեզնից էլ ոչ ոքի չեմ սիրիլ:

ԱՐՇԱԿ.— Թէ որ էդպէս է, արի՛ ես քեզ մի բան նը-  
ւիրեմ (Նստում է գեհեկին եւ հանում է գրպանից մի քաշի-  
նակ անկիւնը կապած) Արի՛, Նազիկ ջան, արի նստիր մօտս:

ՆԱՉԻԿ.— (Մօտենում է, պագում կողքին) Էդ ի՞նչ ես բե-  
րել, Արշակ ջան:

ԱՐՇԱԿ.— Էնպէս լա՛ւ բաներ որ... (Քակում է լապր)  
Է՛նք... էս քեզ մի... գիտե՞ս՝ ի՞նչ է սա... Սվիտակ է.  
սվիտակ. էսպիսի սվիտակ իսկի մեր Ուրբանդիկին էլ չունի.  
(ստւլում է) լսո՞ւմ ես. հա՛, հա՛, հա՛... վերցրու՛ւ. քեզ  
եմ նւիրում: Էս էլ քեզ կոճակ. իսկական սալըաթի շինէ-  
լիցն է, գիտե՞ս: Էս էլ մեր գառան վէզը. գատկի՛, որ  
մորթեցինք, ինքս ներկեցի կարմիր գոյնով: Նազիկ ջան,  
գիտե՞ս վէզ խաղալ. չե՞ս գիտում. ո՛չ ինչ. հէնց որ կինս  
դառնաս, ամբողջ օրը միասին վէզ կը խաղանք և կը սո-  
վորես: Վերցրո՛ւ, մի ամաչիր, էդ բոլորը քեզ համար եմ  
բերել:

ՆԱՉԻԿ.— Շնորհակալ եմ, Արշակ ջան. դո՛ւ պո՛հիր,  
թող քեզ մօտ մնայ, երբոր պէտք կը լինի, քեզնից կ'օգեմ:

ԱՐՇԱԿ (Կապելով քաշիկնակը) Մեր տունը դեռ շատ  
բաներ ունիմ պահած, երբ որ դնանք, էնպի՛սի բաներ ուրի-  
րեմ քեզ սր...

ՏԵՍԻՒ 4

ՆՈՅՆԻ ԵՒ ՇՈՂԻ

ՇՈՂԻ.— (Արագ մտնում է) Նազիկ ջան, արի մօտ, բան  
եմ ասում:

ՆԱՉԻԿ.— (Վախեցած) Ի՞նչ է պատահել, մօրքուր ջա՞...

ՇՈՂԻ.— Հէրդ ինչ որ դէս ու դէն ընկել՝ վազվզում է.  
կարծեմ մի բանի է պատրաստում... Օհանին էլ կանչել է...

ՆԱՉԻԿ.— Ի՞նչ կարող է լինել...

ՇՈՂԻ.— Ո՞վ գիտէ, կարելի է նշանէ քեզ:

ՆԱՉԻԿ.— Ի՞նչ ես ասում մօրքուր ջան...

ՇՈՂԻ.— Ո՛չ ինչ, մի՛ վախենար. ինչ որ էլ լինի, դու  
միամիտ եղիր. միայն թէ Արշակին էստեղ լինելը թող չի-

մանան: (Արշակին) Ա՛րի, Արշակ ջան, արի, տես ինչ եմ  
ցոյց աալիս քեզ:

ԱՐՇԱԿ.— Հէ՛, ի՞նչ պիտի ցոյց տաս (Իմապրում է,  
բայց Շողին քեւից փաշտով դուրս է ասնում նրան):

ՏԵՍԻՒ 5

ՆԱՉԻԿ ԵՒ ՕՀԱՆ, ՅԵՏՈՅ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՉԻԿ.— (Կանգնած է գլխիկոր մի անկիւնում):

ՕՀԱՆ.— (Մտնում է խոր հառաչելով եւ ամեն կերպ աւ-  
խասում է Նազիկի ուշադրութիւնը իւր վրայ դարձնել) Ա՛խ,  
ա՛խ... (Նրզում է):


- Ինձ մի՛ տանջիր, եղի՛ր բարի,
- Ա՛յ աղջիկ,
- Մի՛ ամաչիր, մօտս արի,
- Չան աղջիկ,
- Եկ, եարս ես, եկ,
- Լան ես, եկ,
- Չանս ես, եկ.
- Դու չը կարծես, թէ ես ձեր եմ,
- Նազիկ ջան.
- Տասը ջանէլ ես կը յաղթեմ,
- Նազիկ ջան.
- Եկ, եարս ես, եկ,
- Լան ես, եկ,
- Չանս ես, եկ.
- Սպիտակ գառը մտառը կ'անեմ, ա՛յ աղջիկ,
- Մի՛նակ դու ինձ մէկ «ջան» ասա, ջան՛ աղջիկ:
- Եկ, եարս ես, եկ,
- Լան ես, ես.
- Չանս ես, եկ.

50481

21449-66

(Երգից յետոյ մեղմ մօտենալով խօսում է) Պա՛, էդպէս  
բան կը լինի: Ես էսքան խնդրում եմ, աղաչում եմ և դու  
մի ձայն չե՛ս հանում... Ուէզդնի նաչախնիկի կնիկը, որ Ու-  
էզդնի նաչախնիկի կնիկ է, ինձ որ տեսնում է ասում է՝ «Ջգ...»

ՆԱՀԱՊԵՏ.— (Մտնում է փողոցի դռնից՝ ուրախ է) Սար-  
քեցի, Օհան ջան, ամեն բան սարքեցի և հիւրերն էլ կան-  
չեցի, հիմա կը դան (Նկատում է որ Նազիկը լալիս է) Աղ-  
ջի՛, ի՞նչ ես լաց լինում. ուրիշը էսպէս մարդու համար հո-  
գի կըտայ, իսկ դու նստել՝ բայցդնի պէս արտասու՛ւք ես



9

Թափում: Դէ՛հ, զնա, մօրդ ասա՛ քեզ լաւ դուզէ (Օհանին  
ես էլ զնամ կարգադրութիւններ անեմ (Գնում է Նազիկի հետ):

**Տ Ս Ս Ի Լ Ե**

**Օ Հ Ա Ն, ՅԵՏՈՅ Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ե Ի Հ Ի Ի Բ Ե Բ**

Օ Հ Ա Ն.— Ես էս աղջիկների բանը չեմ հասկանում, մար-  
դու զնալու համար գլուխ են պատում, իսկ երբ փեսա-  
ցուն գտնուում է, նազ են անում, էն էլ ի՛նչ փեսացու...  
Ուրիշը ինչպէս փեսացուի համար հոգի կը տայ: Փառք Աս-  
տըծոյ, փող ունիմ, տուն ունիմ, մէդալ ունիմ. իմ աղի  
նման շա՛ղ չե՛մ, ամեն ինչս տեղն է և ուշ թէ շուտ նահան-  
գապետ եմ դառնալու:

Ն Ա Հ Ա Պ Ե Տ.— (Մտնում է) Գալիս են, գալիս են հիւրերը,  
Օհան ջան... (Իեպի դուրս) Համեցէք, համեցէք:

Օ Հ Ա Ն.— (Նստում է բախի վրայ ծալապատիկ, լուրջ եւ  
հանում է ծխամորեկն ու սկսում ծխել):

Ն Ա Հ Ա Պ Ե Տ.— (Հիւրերին, որ կարգով մտնում են) Համեցէք,  
համեցէք: (Յոյց տալով Օհանին) Էս էլ մեր Նազիկի փեսացուն  
է՛. խընդրեմ ճանաչէք և յարգէք: (Գնում է միւս սենեակը եւ  
անմիջապէս վերադառնում՝ Մարթայի եւ Նազիկի հետ՝ որ նո-  
րահարսի ֆողով է հերս է մտնում նաեւ Շողին: Նազիկին  
նստեցնում են Օհանի կողքին):

Հ Ի Ի Բ Ե Բ Ե Բ (Երգում են).—

Շնորհաւոր, շնորհաւոր,  
Սիրուն ա ջիկ, շնորհաւոր,  
Էս ծաղիկը ո՛ւմ պիտի,  
Բլրուլին էլ վարդ պիտի,  
Սիլուն աղջիկ, շնորհաւոր,  
Մեր Նազիկը ո՛ւմ պիտի,  
Իգիթ աղին եար պիտի,  
Երկինքն է կապել կամար,  
Գտած էք եարի համար,  
Շնորհաւոր, շնորհաւոր,  
Սիրուն աղջիկ, շնորհաւոր:

Օ Հ Ա Ն.— (Բարեկելով) Շնորհակալ եմ, ձեր տուած պատ-  
ուհի համար:

Ա Ր Շ Ա Կ.— (Յանկարծ մտնում է՝ երգելով)

Բ ս գ խուրջինս, տո՛ւր դանակը  
Խնձոր կիսեմ, տա՛մ եարիս  
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ...

Ն Ա Ջ Ի Կ.— Մ՛հ... (Հնկնում է Շողիի գիրկը):

Բ Ո Ղ Ո Ր Ը.— Ի՛նչ պատահեց... Ի՛նչ պատահեց...:

Ա Ր Շ Ա Կ.— Առանց փեսի հարսանիք կը լինի՞, չը՞, հա՞...  
(Օհան եւ Նահապետ շփոթուում են: Շողին խկոյն դուրս է  
սանում Նազիկին, Մարթան հետեւում է նրանց):

Ա Ր Շ Ա Կ.— Էդ ո՞նց է, որ ամէնքը հաւաքուել էք, իսկ ինձ  
չէք իմաց տւել: Լա՛ւ է խելք արի և ինքս եկայ, չէ՞ հայրի՛կ:

Օ Հ Ա Ն.— (Մեկուսի) Ոտքդ կտորուէր ու չը դայեր (բարձր)  
ի հարկէ, ի հարկէ:

Ն Ա Հ Ա Պ Ե Տ.— Արշակ ջան, չը կարծես, թէ էստեղ մի էն-  
պէս բան կար. ո՛չ. հէնց էնպէս հաւաքուել ենք՝ մի քիչ  
զրոյց անելու: Մենք հօ ուրիշ միտք չունինք:

Օ Հ Ա Ն.— (Խիստ) Քեզ ո՞վ կանչեց, այ տղայ... էս ի՛նչ  
ցաւ է. ուր որ գնամ, դու էլ պիտի գաս: Ա՛յ, Նահապետը  
քեզ միբզ կը տայ, շաքար էլ կը տայ, ես էլ քիչ յետոյ տուն  
կը դամ, ինչ որ ուզես կ'անեմ քեզ համար, միայն թէ հիմա  
տուն գնա:

Ա Ր Շ Ա Կ.— Չէ՛, ես էստեղից գնացողը չեմ (Մալապատիկ  
նստում է քեմին մեջքեղը) դահլէս գնաց մի ամբողջ տարի սպա-  
սելուց (յալիս է) Ախր ես կնիկ եմ ուզում, կնիկ...:

Բ Ո Ղ Ո Ր Ը.— (Ծիծաղում են):

Օ Հ Ա Ն.— Սո՛ւս...:

Ա Ր Շ Ա Կ.— Էդ սազը մի դէսը տուէք. (Մտան տալիս է  
նրան բառը, Արեակը նուագում ու երգում է):

Աղջի, Նազի—ձընգընի՛ւ.  
Ես քեզ ասեմ—ձընգընի՛ւ.  
Շատ մի՛ վազի—ձընգընի՛ւ.  
Դու ինձ սպասիր—ձընգընի՛ւ...

Հ Ի Ի Բ Ե Բ Ե Բ.— Ծընգընի՛ւ, ձընգընի՛ւ,  
Ծընգըն, ձընգըն, ձընգընի՛ւ...

Ա Ր Շ Ա Կ.— Ես քեզ կ'ուզեմ — ձընգընի՛ւ,  
Կնիկ կ'առնեմ — ձընգընի՛ւ.  
Մեր տուն տանեմ — ձընգընի՛ւ,  
Պատուով պահեմ — ձընգընի՛ւ:

Հ Ի Ի Բ Ե Բ Ե Բ.— Ծընգընի՛ւ, ձընգընի՛ւ,  
Ծընգըն, ձընգըն, ձընգընի՛ւ...

Ա Ր Շ Ա Կ.— Քեզ հետ միասին լաւ կ'ապրենք,  
Շատ երեսերը կը շարենք,

Տարուայ կիսին մի աղջիկ,  
Տարուայ գլխին մի մանչիկ,  
**ՀԻՒՐԵՐԸ.**—Ծընգլըհա՛, ծընգլըհա՛,

**ԱՐՇԱԿ.**— ծընգլը, ծընգլը, ծընգլըհա՛...  
Ողջ գիւղը հիւր կը կանչենք,  
Զուռնա-դհօլ կը փչենք,  
Կնքւըտիքին քէֆ կ'անենք,  
Անունները կը զնենք.

Օհան, Ոսկան. Կարապետ,  
Սիսակ, Միսար, Նահապետ,  
Թաթոս, Մաթոս, Մարտիրոս,  
Պօղոս, Պետրոս, Կիրակոս,  
Յուսիկ, Լուսիկ, Գոհարիկ,  
Յասմիկ, Աստղիկ ու Զատիկ,  
Սերովք, Քերովք, Վարդազար,  
Աւարել, Արիստղոմ,  
Վառօ, Մարօ ու Հոռոմ,  
Մելրոն, Գասպար, Բաղդասար,  
Աստուած տեսաւ. զարմացաւ:

**ՀԻՒՐԵՐԸ.**—Ծընգլըհա, ծընգլըհա՛...  
Ծընգլը, ծընգլը, ծընգլըհա՛...  
**ԱՐՇԱԿ.**— Ես կը նստեմ քո կողքին,  
Երեխէքքը մեր կողքին,  
Սա կ'երգէ, նա կը խաղայ,  
Պուճուր աղջիկը կուլայ.  
Ճի՛վ, թի՛վ, թի՛վ ձի՛վ... (Պարում է)

**ՆԱՀԱՊԵՏ.**—(Մարթային, որ մտնում է) **Հը՛, ի՞նչ պա-**  
**տահեց նազիկին:**

**ՄԱՐԹԱ.**—Ոչի՛նչ, մի քիչ վախեցել է, հիմայ կը դայ:

**ՕՀԱՆ.**—(Նահապետին մի կողմ փաշտով) **Հիմի ո՞նց ա-**  
**նենք որ ազատւինք Արշակից:**

**ՆԱՀԱՊԵՏ.**—Լաւ է մի անգամից ամէն բան ասես,  
պրծնես: Մարթա, կանչիր նազիկին:

**ՄԱՐԹԱ.**—(Մօտենալով դրան) **Նա՛զիկ:**

**ՆԱԶԻԿ.**—(Իրսից) **Գալիս եմ (Ներս է մտնում նորա-**  
**հարսի ֆողով եւ նստում է Օհանի կողքին):**

**ՕՀԱՆ.**—Ուրեմն, **Նահապետ ջան,** դու իմ ինչդէրս ըն-  
դընճում ես և էս մարդկանց առաջ տալի՞ս ես քո համա-  
ձայնութիւնը:

**ՆԱՀԱՊԵՏ.**—**Ինչպէս որ հրամայում ես. դու մեզ մեծ**  
**պատիւ ես անում:**

**ՕՀԱՆ.**—**Դէ՛, որ էդպէս է, տալիս եմ աղջկանդ նշանը:**

**ՀԻՒՐԵՐԸ.**—**Շնորհաւոր լինի, ամեն, ամեն, շնորհաւոր:**

**ԱՐՇԱԿ.**—**Չէ՛, չէ՛, ես համաձայն չեմ... Նազիկը իմ**  
**կնիկս է լինելու: Չեմ թողնի որ նշան տաս. Նազիկը իմ**  
**կնիկս է լինելու (Քաշտում է հօրը, սակայն հիւրերը ետ ետ**  
**մղում նրան):**

**ՕՀԱՆ.**—(Շտապ վերցնում է հարսի ձեռքը եւ մի մասա-  
նի անցնում մասին) **Դէ՛, հիմա թողէք, արդէն բանը պըր-**  
**ծաւ (Արեակին) Հազար բղաւես, սա իմ կնիկն է:**

**ՀԻՒՐԵՐԸ.**—**Ճիշտ է, ճիշտ է, դա Օհանի կնիկն է:**

**ՆԱՀԱՊԵՏ.**—(Նստում է անում որ նուագեն՝ անախորժու-

**րիւնը անցանելու համար):**  
**ՀԻՒՐԵՐԸ.**—**Նորահարսը թո՛ղ պարէ (Բացակացում են)**  
**Նոր փեսան... նորահարսը թող պարէ... (վերջիններս մի**  
**քիչ յամառում են: սակայն հիւրերը նրանց փաշտում են պա-**  
**րելու: Երբ հարսն ու փեսան դեմդիմաց են ելնում, հարսը**  
**ֆողը նետում է եւ յայտնում է Շողին: Ամենքը զարմանքից**  
**ապշուում են. Օհանը փարսուում է՝ ձեռքը դեռ օղին մեջ ցցած):**

**ՄԱՐԹԱ.**—**Վո՛յ, կուրանամ ես...**

**ՕՀԱՆ.**—**Էս ի՞նչ է... հապա նազիկը ուր է...**

**ՆԱՀԱՊԵՏ.**—(Ցասումով) **Էլի՛ էս կնիկը գլխիս օյին հանեց:**

**ՀԻՒՐԵՐԸ.**—**Ա՛յ քեզ բան... Մէկի տեղ միւսը... էս**  
**ի՞նչ զարմանք էր... Ա՛յ թէ լաւ բան, հա՛...**

**ՇՈՂԻ.**—**Ի՞նչ էք զարմանում, ես մարդ չեմ... Չե՛մ**  
**կարող նշանել: Ի՞նչ անենք, որ առաջին մարդուս թաղել**  
**եմ. իսկ հիմա երկրորդն եմ ուզում:**

**ԱՐՇԱԿ.**—(Որ դեռ նոր է հասկացել իրողութիւնը, ծի-  
ձաղից գետնի վրայ քաւալում է) **Հա՛, հա՛, հա՛... հի՛, հի՛, հի՛...  
ՇՈՂԻ (Երգում է) ես իմ նազիկին խաթից փրկեցի,**

նրա փոխարէն ես նշանեցի:  
Նշանածս դեղին-մեղին,  
Ով որ տեսնի պատուի լեղին:  
Ո՛ւմ էր նա ուզում եւ ո՛ւմը գտաւ,  
Արած հաշիւը սխալ դուրս եկաւ:

(Օհանին) Աստ, այ մարդ, ի՛նչ վախեցար,  
Ինչո՞ւ եղար լեղապատաւ.  
Իմ նպատակիս վերջը ես հասայ,

երկար սպասելով՝ քէօհվի կնիկ դարձայ:  
Դու մոռացիր իմ նազիկին,  
նա կ'սպառէ շիրտը ետրին:  
Լաւ է ուշ լինի, վերջը նուշ լինի,  
նազիկի մարդը սիրած ետր լինի:

ԱՐՇԱԿ.— Հա՛... հա՛... հա՛...

ՕՀԱՆ.— (Ձայրացած) Դո՛ւ ինչո՞ւ ես ուրախացել:

ԱՐՇԱԿ.— Ես ախր գիտէ, որ նազիկը ինձ էր սիրում  
և ուրիշին չի ուզել: Լսեցիր ի՞նչ ասաց Շողին. — «Լաւ է  
ուշ լինի, վերջը նուշ լինի. նազիկի մարդը սիրած ետրը լի-  
նի», ի՞նչ էդ սիրած ետրն էլ ես եմ:

ՕՀԱՆ.— Շա՛նչ...

ԱՐՇԱԿ.— Իսկի էլ շա՛նչ հեմ: Շա՛նչ նա է, ով որ խաբուեց.

(Երգում է) Լաւ է ուշ լինի, վերջը նուշ լինի,  
նազիկի ետրը Արշակը լինի...

ԲՈՒՈՐԸ.— (Երգում է)

Լաւ է ուշ լինի վերջը նուշ լինի.

ԱՐՇԱԿԸ.— Նազիկի ետրը Արշակը լինի.

ՕՀԱՆ.— Նազիկի ետրը Օհանը լինի.

ՊԱՐ ՈՒ ՎԵՐՋ

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Գ. Ա Ր Ա Ր

Բեմը ներկայացնում է գիւղական բնակար: Ձախ կող-  
մը աղբիւր, հեռուն՝ լեռներ:

ՏԵՍԻԼ 1

ՍԱԳՕ (Աղբիւրի մօտ նստած՝ երգում է).

Ալակէօզ աչերդ, կամար յօնքերդ,  
Չեմ կարող մոռանալ, տարել է սերդ.  
Արի՛, ջան, արի՛.  
Արի, ջան արի.  
Սիրտըս կը վառի:

Ես քեզ սիրեցի, որ ինձ ետր լինիս,  
Էրած-վառած սրտիս դիզ ու ճար լինիս,  
Նազիկ ջան, սպասում եմ,  
Սիրուն ջան, տանջում եմ,  
Սնուշ ձայնիդ մեռնիմ:

ՏԵՍԻԼ 2

ՍԱԳՕ ԵՒ ՆԱԶԻԿ

ՆԱԶԻԿ.— (Մտնում է ուրախ) Հաբբա՛ն... (Վազում է  
եւ գրկում Սագօին) Դու երկա՞ր սպասեցիր ինձ, Սագօ ջան:  
Հեռուից տեսայ՝ ինչպէս տխուր նստած էիր, բայց ձայն չը տուի,  
որ «իմ փեսացուն» Արշակը չըլտէ: Էդ շա՛նչ ման է գալիս  
չետեւիցս, այնպէս որ հազիւ եմ կարողանում գոնէ մի  
կարճ ժամանակով թագնուել:

ՍԱԳՕ.— Պէտք է վերջ տալ էդ բոլորին, նազիկ ջան,  
զանչաւ զնաց թագնուելուց, ուզում եմ մարդ տեսնեմ, սրա-  
նրա հետ խօսեմ, գործեր ունեմ, իսկ Շողին մօրս ասել է, որ  
տանից դուրս չը դամ՝ և ո՛չ որի չեքեւամ:

ՆԱԶԻԿ.— Ոչի նչ, Սագօ ջան, իմ խաթէր համար մի օ՛ր էլ  
սպասիր: Մօրքուրս խոստացաւ, որ էսօր անպայման կ'աղատէ  
ինձ Անչակի ձեռքից: Երեկւայ նշանտուքի պատմութիւնը երևի  
քեզ պատմած կը լինի նա: Աճբողջ գիշեր ատում եմ՝ Օհանը չէ  
քնել. դուրսը ման գալիս է եղել, լուսնկային նայել ու  
«ա՛խ» քաշել: Գեղի շներն էլ կատաղել են և հաջել են ամ-  
բողջ գիշերը...

ՍԱԳՕ.— (Միծաղում է) Ղօջա՛ղ կնի՛կ... լա՛ւ օյին է խա-  
ղացել Օհանի գլխին: Հէրդ ի՞նչ է ասում, նազիկ ջան:

ՆԱԶԻԿ.— Եթէ թողնէին՝ հէրս երէկ Շողիին ողջ-ողջ կուլ  
կը տար. ասում է՝ «Էլի՛ իմ ասածը պիտի լինի աղջիկս Օհանին  
չը տուի, Արշակին կը տամ. էս անգամ էլ չի կարող ինձ  
խաբել Շողին»:

ՍԱԳՕ.— Հապա ինչպէ՞ս պիտի անենք:

ՆԱԶԻԿ.— Իեզ պէս իգիթ տղան էլ կը հարցնէ՞ թէ ինչ  
պիտի անի. ձի կը նստես, ու կը փախցնես ինձ:

ՍԱԳՕ.— Ճի՛շտ, նազիկ... թէ որ համաձայն ես, էդպէս  
անենք:

ՆԱԶԻԿ.— Տեսնենք, եթէ Շողին ուրիշ բան չէ հնարել,  
էդպէս կ'անենք:

ԱՐՇԱԿ.— (Իրսից կանչում է) Հէ՛յ, հէ՛յ... աղջի, ո՞ւր ես...

ՆԱԶԻԿ.— Արշակը... գալիս է... թագնուիր, Սագօ ջան  
բայց հեռու չըգնաս, վախենում եմ նրա հետ մինակ մնա-  
լուց: Էս մօտերքը թագնու, երբ կանչեմ, կը գաս... (Համ-  
բուռումն ցրան): Դէ՛հ, հիմա զնա:

ՍԱԳՕ.— (Հեռանում է):

ՏԵՍԻՒԼ 3

ՆԱԶԻԿ ԵՒ ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ.—(Երեւում է) Հէ՛, հէ՛, հէ՛... Նազիկ... (Տեսնելով նրան) Դու էյստե՞ղ ես... որ ասացի՛ կը դտնեմ... Արի, եար ջան, արի, մի լաւ պաչ արա ինձ: Հիմա էլ հէրս չէ կարող խանգարել մեզ, արի պաչեմ քեզ (Մտեցնում է Նազիկին որ բռով ջուր է սրսկում դեպի նրա: Արեակը այժմ սրբելով) Բա՛... դու ինձ չե՞ս պաչում:

ՆԱԶԻԿ.—Երբոր պսակուենք, այն ժամանակ կը պաչեմ:  
ԱՐՇԱԿ.—Ես էլ էդ չեմ ասում, արի պսակուենք հէնց հիմա, էս ժամին:

ՆԱԶԻԿ.—Չէ՛, հիմա չեմ ուզում:

ԱՐՇԱԿ.—Հապա ե՛րբ:

ՆԱԶԻԿ.—Եկող տարի:

ԱՐՇԱԿ.—Ի՛նչ... էլի՛ մէկ տարի սպասե՛մ... Ո՛չ, ես համաձայն չեմ (Երգում է):

Աղջի, էս ի՞նչ արեցիր,  
Թամամ հողիս հանեցիր,  
Ինձ նման թաղան տղին  
Առանց դանակ մորթեցիր:  
Ախ, իմ սիրուն աղանեակս տանջում եմ,  
Ամա՛ն, ամա՛ն, այբում եմ,  
Ես քո սիրով տանջում եմ:  
Ձանէլ եմ, կնիկ չունիմ,  
Քիշերը քնկեր չունիմ,  
Աստուծ վկայ, սուտ չըկայ,  
Քեզնից ուրիշ եար չը կայ:  
Ամա՛ն, ամա՛ն, այբում եմ,  
Ես քո սիրով տանջում եմ...

(Երգով տեսնում է եւ չէն կատար Նազիկի գնալը: Օհանք մտամոլոր ման է գալիս. լսելով Արեակի ձայնը, մտեցնում է եւ կանգնում նրա ետեւը: Արեակը երգը վերջացնելով շուռ է գալիս՝ Նազիկին գրկելու, բայց տեսնում է հորը: Երկար եւ լուռ նայում են իրար):

ՏԵՍԻՒԼ 4

ԱՐՇԱԿ, ՕՀԱՆ ԹԵՏՈՅ ՇՈՂԻ

ՕՀԱՆ.—(Բռնելով նրա ախանջը) Տանջու՞մ ես... այբու՞մ ես... սիրո՞ւմ ես... Ես քեզ ցո՛յց կը տամ սէրը... (Յետոյ մեղմութեամբ) Լսի՛ր, Արշակ ջան. արի՛ ես քեզ մի քան ասեմ:

ՇՈՂԻ.—(Երեւում է եւ քաղցնում աղբիւրի յետեւը):

ՕՀԱՆ.—Թո՛ղ դու էդ Նազիկին, չե՞ս տեսնում ի՛նչ կորորտուող աղջիկ է, արի փոխենք իրար հետ: Դու տո՛ւր ինձ Նազիկին, իսկ ինքը վերցրու Շողիին: Նա էլ լաւն է, գիտե՞ս...

ԱՐՇԱԿ.—Չէ՛, չեմ փոխիլ:

ՕՀԱՆ.—Քեզ համար մէկ չէ՞, ով որ լինի կնիկդ: Դէ, լաւ, դու ինձ տուր Նազիկը, իսկ ես քե՛զ տամ Շողիին և մեր կապոյտ քուռակը:

ԱՐՇԱԿ.—(Թափահարելով գլուխը) Չէ՛, չեմ ուզում:

ՕՀԱՆ.—Չախմախի քարն էլ հետը կը տամ, էն որ կրակ է հանում:

ԱՐՇԱԿ.—Հը՞... չախմախի քա՞րը... (Տատանելուց յետոյ) Չէ, ուզում չեմ:

ՕՀԱՆ.—Դէ, լաւ էս մենդալն էլ վրան կը տամ:

ԱՐՇԱԿ. Ուզում չեմ:

ՕՀԱՆ.—Մի էս յիմարին մտիկ արէք, ես սրան մեղալս տամ և սա էլ նա՞զ անի... Ուզածս էլ ի՞նչ է, մի ինչոր գիւղացի աղջիկ: Ա՛յ շա՛չ, դու գիտե՞ս թէ Շողին ինչ կնիկ է. նրա նման կնիկ բնաւ չի գտնուիլ: Շողին էսպէս լաւն է որ...

ՇՈՂԻ.—(Դուրս գալով եւ կամացուկ քելից բռնելով) Ի հարկէ, եթէ լաւ չը լինէի, հետս չէիր նշանուիլ, Օհան ջան:

ՕՀԱՆ.—(Վեր ցատկելով) Կորի՛ր... կորի՛ր, սատանայ... էնքա՛ն աներես ես, որ հետս էլ խօսում ես:

ՇՈՂԻ.—Ինչո՞ւ չը խօսեմ, ամբողջ կեանքը մունջ չե՞նք անցկացնելու:

ՕՀԱՆ.— Ի՞նչպէս թէ ամբողջ կեանքը անցկացնելու. ի՞նչ ես խօսում, ա՛՛ կնիկ:

ՇՈՂԻ.— Չեմ իմանում, թէ դու ի՛նչիցս ես դժգոհ, Օհան ջան: Իսկ ես, եթէ ուզում ես ճիշտն իմանալ, շատ ուրախ եմ, որ քու նշանածն եմ (Երգում է):

Հանգիստ եղիր, Օհան ջան,  
ես կը սարքեմ ամեն բան,  
Հէնց էսօր կը պատկենը,  
Ուրախ հարսանիք կը սարքենը,  
Մի բարձի կը ծերանանը,  
Կը վայելենը հանգիստ կեանք:

ՕՀԱՆ. — Հանաքը մէկ կը լինի,  
Անհամուժեան չեն հասցնի.  
Չեռք վերցրու դու ինձանից,  
Մի՛ խօսիր էլ նշանից:  
Դու ինձ գլխից հանեցիր,  
Ձօրով վզիս կապեցիր:

ՇՈՂԻ. — Ես հօ քեզ մօտ չեմ եկել,  
Դո՛ւ ես եկել, ինձ գրտել,  
Էս մատանին տուցիր,  
Մարդկանց մօտ նշանեցիր,  
Հիմա ո՞նց ես յետ կանգնում,  
Ու ինձ խայտառակ անում:

ՕՀԱՆ. — Ա՛ կնիկ, զլիսիս ցաւ դարձար,  
Խարէութեամբ կնիկ դարձար  
Ձակօժով մեծ պողոզ է.  
Սրա պատիժը շատ սարօզ է,  
Ում կ'ուզես դու հարցրու,  
Ինձանից դու ձեռք վերցրու:

ՇՈՂԻ. — Ես վախեցող պտուղ չեմ,  
Քեզ մի պայման կը դնեմ:  
Նազիկից դու ձեռք վերցրու,  
Տղիդ էլ խօսք հասկացրու.  
Փաստփուսէդ քաշեցէք,  
Նազիկին հանգիստ թողէք:

(Խօսում է) Հիմա հասկացա՞ր ինչ է ուզածս:

ՕՀԱՆ. — Որ էդպէս է, աչքդ կը հանեմ ու կը մնամ էս  
տեղ մինչև որ Նազիկին առնեմ:

ՇՈՂԻ. — Դէ լաւ, դու այդ խօսքը ասացիր, հիմա դո՛ւ զի-  
տես քո բանը: Բայց ես էլ իմ գիտցածը կ'անեմ. (Լսում է գեղ-  
ջուկների եւ գեղջկուհիների երգի ձայներ. Նազիկն էլ ցրանց  
հետ է, մտնում են: Նազիկին մի կողմ փախելով) Սաղօն ո՞ւր  
է, Նազիկ ջան:

ՆԱՋԻԿ. — Էստեղ, մօտերն է, քարերի յետև թագնուած է:

ՇՈՂԻ. — Արի՛, ինչ որ քեզ սովորեցնեմ, զնա՛ նրան  
պատմիր ու ասա, որ լաւ կատարէ (Տանում է ցրան խորք,  
կամացուկ պատմում է եւ Նազիկը հեռանում է):

Տ Ե Ս Ե Լ 5

ՇՈՂԻ, ՕՀԱՆ, ԱՐՇԱԿ, ԳԻՒՂԱՅԻՆՆԵՐ ԵՒ ՎԵՐՋԸ  
ՆԱՋԻԿ ԵՆ ՍՍԳՊ

ԳԻՒՂԱՅԻ. — Բարով, քէօ՛վա Օհան, չնորհաւ որ լինի  
նշանդ . . .

ՕՀԱՆ. — Ո՛չ, էդպէս բան չը կայ, ես նշան-մշան չեմ  
ճանաչում, երէկանը խարէութիւն էր . . .

ՇՈՂԻ. — Ուրէութիւն է, թէ ո՛չ, չը գիտեմ. միայն  
գիտեմ որ քո կնիկը պիտի լինիմ, պրծաւ զնաց: (Նրզում է):

Ես իմ եարինն եմ, Օ՛յ, Օ՛յ,  
Օհանինն եմ, Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ . . .  
Քէօ՛վի կնիկ կ'ուզէի,  
Ուրիշ մարդ էլ չուզէի:  
Էլի՛ եարինս եմ, Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ,  
Օհանինն եմ, Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ . . .  
Երէկ տեց մատանի,  
Նշանը յետ չը կանգնի,  
Էլի՛ եարինս եմ Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ,  
Օհանինն եմ, Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ . . .  
Էս զիշեր մենք կը պատկենը,  
Ձեզ էլ ղօնաղ կը կանչենը,  
Էլի՛ եարինս եմ, Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ,  
Օհանինն եմ, Օ՛յ, Օ՛յ, Օ՛յ . . .

ՕՀԱՆ. — Լսէ՛ք, տեսէ՛ք, թէ Աստուած կը սիրէ՛ք, ինչե՞ր է  
ասում, կարծես ինք արդէն մարդու զնաց, ձեզ էլ հարսանիքի  
է կանչում:

ՇՈՂԻ. — Էլ ի՞նչ ուշինք մտածելու. չէ՞ որ ես և դու  
էդպէս վճռեցինք:

ՕՀԱՆ. — (Նրկու ձեռքով գլխին տալով) Վա՛յ, վա՛յ . . . Էս  
ի՞նչ խաթայի մէջ ընկայ . . . Ա՛յ յիմար մարդ, եկար տղիդ պը-  
սակելու, ինքդ ինչո՞ւ մէջը ընկար կոտորած դալալի նման . . .  
Ա՛յ, թէ տեղն է . . .

ՄԻ ԳԻՒՂԱՅԻ. — Ինչ-որ զինուոր է գալիս . . . զինուոր չէ  
ստրախիկ է . . . չէ՛, չէ՛ զինուոր է:

ՄԻ ՈՒՐԻՇԸ.— Արդեօք ո՞վ է, ինչո՞ւ է գալիս...

ՍԱԳՕ.— (Մտնում է՝ գլխարկը աչկերին իջեցրած, որպեսզի չը նայուի)։ Նազիրը եւս գալիս է։ Սագօն ձայնը փոխելով երգում է)։

Ո՞վ է ձեր մէջը,  
Սէլսկի ստարշինս,  
Բերած հրամանըս,  
Թող շուտ առնի նա։

ՕՀԱՆ.— (Մտենալով եւ ուղղելով կրծքին կախւած շքեւեւերը եւ պատուի կենալով)

ՍԱԳՕ.—  
Էդ ես եմ, որ կամ։  
Ուէզդնի նաչալնիկ  
Կանչում է ձեզ իսկոյն,  
Ձեզ յանձնելու ոսկէ խաչ,  
Հրաման կայ բարձրագոյն։

ՕՀԱՆ.—  
Չին էլ ստացայ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ,  
Պրիստաւ դարձայ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ։

ԲՈՂՈՐԸ.—  
Չին էլ ստացաւ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ,  
Պրիստաւ դարձաւ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ։

ՍԱԳՕ.—  
Ո՞վ է ձեր մէջը  
Օհանի տղան,  
Նրա համար էլ  
Բերած եմ հրաման։

ԱՐՇԱԿ.— (Առաջ գալով եւ ինքզինքը օտարացի էր ցուցնելով)

ՍԱԳՕ.—  
Էդ ես եմ, որ կամ,  
Ի պատիւ իւր հօրը  
Կը ստանայ եւ որդին,  
Ուրեղանիկ, կամ ստրամնիկ  
Կամ դեսեանիկի չին։  
Ուէզդնի նաչալնիկը  
Յարգելի Արշակին  
Իւր սիրուն աղջիկը,  
Կուգէ տալ որպէս կին։

ԱՐՇԱԿ.—  
Կին էլ ստացայ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ,  
Ստրամնիկ դարձայ,  
Տեսէ՞ր ի՞նչ պատիւ։

ԲՈՂՈՐԸ.—  
Կին էլ ստացաւ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ,  
Ստրամնիկ դարձաւ,  
Տեսէ՞ր՝ ի՞նչ պատիւ։

ՕՀԱՆ.— (Պատուի կենալով) Չորաւի ժելաի վաչի բլա-  
գարուքիէ, նաչալնիկի հրամանը ինձ համար զակօն է։ Էս բո-  
պէին կը գնամ, խուրջինս կը կապեմ ու որդուս հետ միասին  
ճանաչայ կ'ընկնեմ։ Դէ՛հ, տղերք, աղջիկներ, մնաք բարով։  
Արշակ արի գնանք։

ԱՐՇԱԿ.— Հապա նազիրը...

ՕՀԱՆ.— Յիմար, քեզ նաչալնիկը իւր աղջիկն է տալիս և  
քո աչքը դեռ նազիրի վրայ է մտում... դիտե՛՛ս ու՛մ փե-  
տան ես լինելու։ Ուէզդնի նաչալնիկին։

ՇՈՂԻ.— Ուրեմն՝ մեր աղջիկն էլ չէ՞ք սուղում, էլի՞։ Լսում  
էք, հէ՛յ մարդի՛կ, Օհանն ու Արշակը նազիրից ձեռք են վեր-  
ցրում։

ՕՀԱՆ.— Հերի՛ք է՛ ինչ մենք մի տարի ման եկանք ձեր աղ-  
ջրկան ետեից, հիմա պահեցէք նրան ուրիշի համար, Արշակ,  
գնանք։

ՇՈՂԻ.— Սպասի՛ր, սպասի՛ր, (բռնելով պոչից) էդ ո՞ւր  
ես գնում, առանց ինձ։ Ես քո ծաղրի առարկան եմ, ի՞նչ որ էդ-  
պիսի խաղեր ես խաղում հետս։ Դու իմ ձեռքից ո՞ւր կը փախ-  
չե՞՛ս, ո՞ւր որ գնաս, յետեիցդ կը գամ, էդ մէկը լաւ իմացիր։

ՕՀԱՆ.— Ա՛յ ժողովուրդ, էսպիսի բան տեսել էք, որ  
կնիկը զօռով մարդու գնայ։ (Շողիին) Ես քեզ չեմ ուզում,  
չե՛մ ուզում և չե՛մ ուզում (ուզում է գնալ)։

ՇՈՂԻ.— (Բռնում է նրա քեից եւ երգում է)

Եար ջան, մենակ մի գնալ,  
Շողին տըխուր կը մնայ.  
Ես իմ եարինն եմ, ժ՛յ, ժ՛յ, ժ՛յ,  
Օհանինն եմ, ժ՛յ, ժ՛յ, ժ՛յ...  
Էս ի՞նչ բախտի ես հասայ.  
Պրիստաւի կնիկ էլ դարձայ.  
Էլի եարինն եմ, ժ՛յ, ժ՛յ, ժ՛յ.  
Օհանինն եմ, ժ՛յ, ժ՛յ, ժ՛յ...

ՕՀԱՆ.— (Ցանկաւոր խլում է ձեռքը եւ Օհանի հետ փախ-  
չում)։

ՇՈՂԻ.— (Մտնելից) Էդ ո՞ւր... էդ ո՞ւր ես փախչում, Օ-  
հան ջան, սպասիր, ես է՛լ եմ գալիս... հա՛, հա՛, հա՛...  
(բոլորը ծիծաղում են) Դէ՛հ, հիմա կարող ես հանգիստ լինել,

Նազիկ ջան, ա՛յ, էսքան մարդկանց ներկայութեանը նրանք հրաժարեցին քեզնից: Թող զնան հիմա նաչալնիկին աղջրկանն առնեն. դու էլ քեզ համար հանգիստ կարող ես Սազօի հետ նշանուել: Տղերք, աղջիկներ, Սազօն մեր մէջն է և՛ դուք չէք ճանաչում:

ՍԱԳՕ.—(Հանում է գլխարկը, բոլորը հանաչում են հետզհետե):

ԳԻՒՂԱՅԻՆԵՐ.—Սա՛զօն... Սազօն է եղել... Ա՛յ քեզ բան... Ո՞նց եղաւ՝ չը ճանաչեցինք... Բարով, Սազօ ջան, Սազօ... Սազօ, բարով ես եկել (Սազօն զինուորի պէս պատասխանում է):

ՇՈՂԻ.—Հիմա էլ թաղցնելու բան չկայ, Սազօ ջան և Նազիկ ջան, կարող էք ամենքին պարզապէս ասել, որ դուք սիրում էք միմեանց: Մօտեցի՛ր, Նազիկ ջան, մի՛ ամաչիր, նշանուուքի փոխարէն խօսք տւէք էստեղ՝ ամէնքի առաջ, որ սիրում էք իրարու և պիտի ամուսնանաք:

ՍԱԳՕ.—Ես խօսք եմ տալիս:

ՇՈՂԻ.—(Նազիկին) Իսկ դո՞ւ:

ՆԱԶԻԿ.—(Պատասխանի փոխարէն պարզում է իւր ձեռքը Սազօին):

ՇՈՂԻ.—Քանի որ էդպէս է, համբոյրեցէք բոլորի ներկայութեանը, որ միմեանց արժանանալու նշանը լինի: (Սազօն եւ Նազիկը համբուրում են) Է՛հ. թող Աստուած օրհնէ ձեզ: (Համբուրում է Նազիկին): Շնորհաւոր լինի, Նազիկ ջան, վերջը քո մուրազին հասար:

ՆԱԶԻԿ.—Քո շնորհիւ միայն, մօրքոյր ջան:

ԲՈՂՈՐԸ.—Շնորհաւոր լինի... Աստուած օրհնէ ձեզ...

Անփոշման լինիք...

ՄԻ ԳԻՒՂԱՅԻ.—Գալիս են ձերոնք, գալիս են...

ՇՈՂԻ.—Խնդրեմ շտապով մի շնորհաւորական երգէք:

ԲՈՂՈՐԸ (Երգում են) Շնորհաւոր, շնորհաւոր,  
Սիրուն աղջիկ շնորհաւոր,  
էս ծաղիկը ո՛ւմ պիտի,  
Բլրուլին ալ վարդ պիտի,  
Մեր Նազիկը ո՛ւմ պիտի,  
Իգիթ տղին եար պիտի,  
Երկինք կապել է կամար,  
Գտած էր իրար համար.  
Շնորհաւոր, շնորհաւոր,  
Սիրուն աղջիկ, շնորհաւոր:

ՏԵՍԻԼ Ե

ՆՈՅՆՔ, ՕՀԱՆ, ԱՐՇԱԿ, ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ՄԱՐԹԱ.

ՆԱՀ.—(Եզրը ընդհատելով) Սպասեցէք, սպասեցէք.—Էս ի՛նչ է, չեմ հասկանում... էս ինչե՛ր էք անում:

ՇՈՂԻ.—Ի՛նչ պիտի անկնք, աղջկանդ իսկոյն և ետ նրչանեցինք և պրծաւ-դնաց:

ՆԱՀ.—Ինչպէ՛ս թէ՛ նշանեցիք... Ո՞վ է էս տղան...

ՍԱԳՕ.—Չե՛ս ճանաչում ինձ, հայրիկ, քո հարեւանի տղան՝ Սազօն եմ, մոռացե՛լ ես:

ՆԱՀ.—(Զարմացած) Սազօն...

ՄԱՐԹԱ.—(Մասը կծելով) Վո՛յ կուբանամ ես...

ԱՐՇԱԿ.—Վե՛րջը՝ ո՞վ է ում հետ նշանուում:

ՇՈՂԻ.—Քեզ համար միևնոյնը չէ՛, ա՛յ յիմար, դու զնա նաչալնիկի աղջիկն առ: Ը՛հ, ձիւնը էդ սարսաղ գլխիդ:

ՆԱՀ.—Է՛լի էս կնկան օյինն է... Հապա նաչալնիկից եկած գինուորը ո՞ւր է.

ՇՈՂԻ.—Ի՛նչ գինուոր, ի՛նչ նաչալնիկ... էստեղ էդպիտի մարդ չըկայ, մենակ Սազօն է եկել էստեղ, էն էլ արդէն նշանուեց աղջկանդ հետ:

ՆԱՀ.—Ես համաձայն չեմ... Ես չեմ տւել իմ հայրական օրհնութիւնս: Եթէ Օհանին կամ Արչակին չեմ տւել աղջիկս, ո՛չ ոքին էլ չեմ տալ:

ՇՈՂԻ.—Դրանք երկուսով էլ այսքան մարդկանց առաջ հրաժարեցին Նազիկից:

ՕՀԱՆ.—(Հառաչանքով) Հապա էսպիտի բան կը լինի՞...

ՇՈՂԻ.—(Յաղրակաւօրէն) Կը լինի, հապա չի՞ լինի: Եթէ նշանը տալուց յետոյ կինը թողնել-փախչելը կը լինի, է՛ս էլ կը լինի:

ՄԱՐԹԱ.—Վո՛յ... կուբանամ ես...

ՆԱՀ.—Ա՛խ Շողի, վա՛խ, Շողի, թէ՛ մի թագուն տեղ ձեռս կ'ընկնես, էն ժամանակ կը տեսնես, թէ ի՛նչ կ'անեմ քեզ...

ՇՈՂԻ.—Սխորժակդ քեզ պահիր, փեսայ ջան:

ԱՐՇԱԿ.—Ուրեմն՝ վերջը ի՛նչ եղաւ...

ՇՈՂԻ.—Չո՛ւ ու ցա՛ւը կերպարանքիդ եղաւ. է՛ն եղաւ, ինչ որ արդէն պէտք էր լինէր:

ՕՀԱՆ.—Իսկ նաչալնիկի մօտ գնա՛լը, իսկ խա՛չը... պրիստալի պաշտօնը...

ՇՈՂԻ.—(Ափին փչելով) Փո՛ւ՛... թո՛ւ՛ւ, երկինք համ-  
բարձա՛ւ:

ՕՀԱՆ.—Վա՛յ, Արշակ ջան, էստեղ էլ էս անպիտանը մեզ  
խաբեց...

ՆԱՀ.—Էդ էլ Շողիի սարքած բանն է:

ՇՈՂԻ.—Այ քեզ նորութիւն, դէ ի հարկէ իմ սարքած  
գործն է: Մի՞թէ ես քեզ չէի ասու՛մ թէ՛ չեմ թողնի, որ  
աղջիկդ ուրիշին տաս:

ՕՀԱՆ.—Գնանք... դնանք, Արշակ ջան, էստեղ էլ  
մենք գործ չունինք:

ԱՐՇԱԿ (Երգում է) Գլխիս այն բերեցին

Հարսիս ձեռքից խլեցին,

ՕՀԱՆ.—

Մեղալով քէօճվին թողած,

Գնաց՝ առաւ խոզարած,

ՄԻԱՍԻՆ.—

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ՕՀԱՆ.—

Էդ էլ լաւ է, այ տղայ,

Մեղատորբ ես եղայ:

ԲՈՂՈՐԸ.—

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ԱՐՇԱԿ.—

Ախր ո՞վ է իմացել,

Որդուց հարսնացուն խլել:

ԲՈՂՈՐԸ.—

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ՕՀԱՆ.—

Սխալմունք էր, որ եղաւ,

Աղջիկը շատ դիւր եկաւ:

ԲՈՂՈՐԸ.—

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ԱՐՇԱԿ (Միասին)

Մինչ խլում էինք իրարից

ՕՀԱՆ

Փախցրին մեր քթի տակից,

ԲՈՂՈՐԸ.—

Վա՛, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ԱՐՇԱԿ

Երբեք չենք խարուել էսպէս,

ՕՀԱՆ (Միասին)

Ո՛չ դու ստացար ո՛չ էլ ես:

ԲՈՂՈՐԸ.—

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վա՛յ...

ՇՈՂԻ.—

Լաւ է ուշ լինի,

Վերջը նուշ լինի,

Նազիկի մարդը

Սիրած եար լինի:

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԳ ԵՒ ՊԱՐ)



